Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
սեպտեմբերի 30 -ի N 596 - Ա
որոշման

«ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Էներգախնայողությունը ապահովելու նպատակով նախատեսվում է Արցախի Հանրապետության Շուշի քաղաքի մշակույթի տան, Շուշի քաղաքի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի, Շուշի քաղաքի կերպարվեստի թանգարանի տանիքներին այլընտրանքային արևային /ON GRID/ ֆոտովոլտային կայանների տեղադրում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետության Շուշի քաղաք, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 9,442,950 դրամ, որից Արցախի Հանրապետության Շուշի քաղաքի մշակույթի տան տանիքին ֆոտովոլտային կայանի տեղադրում՝ 3,147,650 դրամ, Շուշի քաղաքի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի տանիքին ֆոտովոլտային կայանի տեղադրում՝ 3,147,650 դրամ, Շուշի քաղաքի կերպարվեստի թանգարանի տանիքին այլընտրանքային արևային /ON GRID/ ֆոտովոլտային կայանի տեղադրում՝ 3,147,650 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության Շուշի քաղաքի մշակույթի տուն, Շուշի քաղաքի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոց, Շուշի քաղաքի կերպարվեստի թանգարան

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ամբողջ ծրագրերը նախատեսվում է իրականացնել՝ 2020 թ. հոկտեմբերի 01-ից մինչև 2020 թ. դեկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է Արցախի Հանրապետության Շուշի քաղաքի մշակույթի տան, Շուշի քաղաքի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի, Շուշի քաղաքի կերպարվեստի թանգարանի տանիքներին տեղադրել այլընտրանքային արևային /ON GRID/ ֆոտովոլտային կայաններ: Ծրագրերը նախատեսվում է իրականացնել՝ 2020 թ. հոկտեմբերի 01-ից մինչև 2020 թ. դեկտեմբերի 30-ը: Արժեքը՝ 9,442,950 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Այլընտրանքային /ON GRID/ ֆոտովոլտային կայանների տեղադրում՝ 9,442,950 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու եւ գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ